Արձանագրություն N3

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի աճուրդի արդյունքների գնահատման նիստի

ք. Երևան

29 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:45

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Պեպանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1.Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և նիստը կասեցնելու վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, պարզեց, որ Հրավերին կից Պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N3–ում՝ ըստ չափաբաժինների ներկայացված գնման առարկաների դիմաց նշված տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ (հակառակ է նշված տեխ. բնութագիրը),ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետով որոշեց՝ նիստը կասեցնել՝ առաջարկելով «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի նիստը կվերսկսվի 03.12.2018թ. ժամը 11:45-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. 03.12.2018թ. ժամը 11:45-ին «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսելու վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկվել է առկա անհամապատասխանությունը, ուստի Հանձնաժողովը որոշեց՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Անգործության ժամկետի վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը տեղեկագրում կիրապարակվի ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Ա. Պեպանյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան